ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հունիսի 2017 թվականի N 130-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 96-րդ հոդվածի 3-րդ մասը, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.34-րդ կետը և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2017 թվականի հունիսի 26-ի N 01/17.1/3958-17 հանձնարարականը՝ **որոշում եմ.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի *Գեղարքունիք համայնքի* տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության ընագավառները, ժամանակահատվածը և հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը համաձայն հավելվածի:

2. Իրավական և մասնագիտական հսկողության իրականացման գործընթացում ղեկավարվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2016 թվականի հունվարի 25-ի N 1/32.1/727-16 հանձնարարականով ներկայացված՝ համապատասխան ոլորտի պետական լիազորված մարմնի և իրավական հսկողության լիազոր մարմնի համատեղ հրամաններով հաստատված Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից իրականացվող վարչական հսկողության հարցաշարով:

3. Անհրաժեշտության դեպքում իրավական և մասնագիտական հսկողության աշխատանքային խմբում ներգրավել մարզպետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների այլ մասնագետների:

4. Մասնագիտական հսկողություն իրականացնելիս անհրաժեշտություն առաջանալու դեպքում աշխատանքային խմբում ներգրավել նաև մասնագիտական որակավորում ունեցող այլ անձանց *(համաձայնությամբ)*:

5. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ համայնքում իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում, իրավական և մասնագիտական հսկողության Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի կողմից հաստատված օրինակելի ձևին համապատասխան կազմել արձանագրություն:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ

2017 թվականի հունիսի 27
ք. Հրազդան

Հաստատված
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի
2017 թվականի հունիսի 27-ի N 130-Ա որոշմամբ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության բնագավառները, ժամանակահատվածը և հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը

հ/հ	Համայնքի անվանումը	ժամանակահատվածը	Իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության բնագավառ	Հսկողություն իրականացնող պաշտոնատար անձիք	
				Զբաղեցրած պաշտոն (աշխատանքային խմբի ղեկավար, անդամ)	Ազգանուն, անուն
1	2	3	4	5	6
1	Գետամեջ	*ապրիլ 2015թ.-հունիս-հուլիս 2017թ.*	1.Արտակարգ իրավիճակների բնագավառ 2.Առևտրի և ծառայությունների բնագավառ 3. Բնապահպանության բնագավառ 4. Ընդերքօգտագործման բնագավառ 5. Անասնաբուժության, բուսասանիտարիայի և սննդամթերքի անվտանգության բնագավառ 6. Հողօգտագործման բնագավառ 7. Կրթության բնագավառ 8. Մշակույթի բնագավառ 9. Պաշտպանության բնագավառ 10. Սոցիալական պաշտպանության բնագավառ 11. Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառ 12.Տրանսպորտի և կապի բնագավառ 13. Ոստիկանության ոլորտում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ 14. Առողջապահության բնագավառ 15. Քաղաքաշինության բնագավառ 16. Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների մի շարք բնագավառներ	ղեկավար՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ անդամներ՝ 1. ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժնի առաջատար մասնագետ 2. ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ 3. ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի պետ 4. ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ 5. ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարգային հողային պետական տեսչության պետ 6. ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետի տեղակալ	Ալեքսանյան Հարություն Թումոյան Ռոբերտ Բաղդասարյան Սեդա Հակոբյան Երվանդ Վարդանյան Արմեն Ավետիսյան Գուրգեն Թումոյան Կամո